Կարելի է խորհիլ որ Բաբակ Սիւնեաց իշխանութեան տիրանալէ վերջ՝ չվստահեցաւ Սիւնեաց իշխանադուններուն որ երկիրը իր բացակայութեան առեն կառավարեն, եւ խիստ հաւանաբար Եռանչահիկ Ստեփաննոսեաններուն յանձնեց իշխանութիւնը: Երբ Բաբակի բացակայութեան՝ Բաղաց գաւառ, Գեղարքունիք ապստամբեցան, Աբլասադ Բաբակի միացած ճզմեց ապստամբութիւնը: Արդ երբ Բաբակ ստիպուեցաւ վերադառնալ Արաբական բանակներուն դէմ՝ այն առեն ապստամբութիւնը վերստին ծայր տուաւ առաջնորդութեամբ Դաւո (Դաւիթ) եւ Շապուհ զօրավարներու: Ապստամբները սպաննեցին Աբլասադը, ի սուր ճիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառ եւ զաւանսն Ջուռեաց զԿառնակաշ, զՀակարի եւ զՏափառ: Ասոնք, հաւանաբար, Բերձոր գաւառի ամբողջութեամբ, կը պատկանէին Ստեփաննոսեան Եռանչահիկներուն:

Կաղանկատուացի կը շարունակէ · «Եւ դարձեալ ապստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու, կալեալ զգաւառսն ամս տասն եւ երկու, որք են այսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք, եւ Տրի գաւառ» (էջ 376):

Հոս ամս տասն եւ երկու ակներեւ սըխալ կ'երեւի եւ հաւանաբար պէտք է սրբագրել ամիս տասն եւ երկու:

Ապստամբները կ'երեւի տարի մը տէր կը մնան երկրին: Բաբակ յաջողած էր արաբական բանակները պարտութեան մատնել եւ վերստին իր ուշադրութիւնը դարձուցած էր Սիւնեաց վրայ: Կաղանկատուացի կը վկայէ · «Յետ այնորիկ զապանողսն Աբլասադայ կալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին: Եւ Յիսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան, քեռորդի Աբլասադայ՝ ըմբռնեալ զգաւառսն՝ իշխանեցաւ ամենայնի: Եւ ի նոյն ամին էանց Բաբան զգետովն Երասխ ի Պարսից, եւ յԱմարաս գաւառ ընակեցաւ · բան խաղաղութեան սկըսաւ խօսել, զի ի հնազանդութիւն նմա եկեսցեն, եւ դժամայիւտ զգջմամբ ոմանք հնազանդեցան եւ յետոյ դաւեալք անհնազանդ եղեն: Անտի դարձեալ Բաբանայ յերկիր իւր ի Պարսս յԱտրպատական՝ եթող զօրավար ոմն Ռոստոմ հանդերձ զօրօք, եւ ետ նմա հրաման ոչ պատերազմիլ ընդ բերդին (Գորոզու, Յ. Ք.), այլ ի սէր համակել, զի հնազանդեսցին: Իսկ Ռոստոմայ անփոյթ արարեալ զպատուէրն Բաբանայ՝ ել տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին: Յայնժամ ապաւինեալ բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի՝ զխաչս եւ զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական զունդն, եւ զերծեալ յայնմանէ զՔրիստոս փառաւորէին՝ զոհանալով զնմանէ» (էջ 376–7):

Դժբախտաբար ոչ մէկ ակնարկութիւն կայ հոս թէ Բաբակ ե՞րբ կալանաւորեց Սահլ Սմբատեանը: Երբ Բաբակ Բաղաց եւ Գեղարքունեաց ապստամբութիւնը կը ճզմէր իրեն գործակից կը գտնենք Ստեփաննոսեան Աբլասադ Եռանչահիկը: Ուրեմն հաւանական չէ որ այդ առեն Բաբակ կալանաւորած ըլլայ Աբլասադի ազգական Սահլ Սմբատեանը: Ոչ ալ Սահլի կը հանդիպինք Դաւոյի եւ Շապուհի առաջնորդած ապստամբութեան մասնակցողներուն մէջ: Դաւոյ եւ Շապուհ՝ Աբլասադը սպաննելէ վերջ իրենք ալ Աբլասադի մերձաւորներուն ձեռքը կ'իյնան եւ կը սպանուին: Գորոզի բերդին մէջ ապաստանած միւս Սիւնեցի ապստամբները Դաւոյի եւ Շապուհի սպանութենէն ալ վերջ կը շարունակեն Բաբակի դէմ իրենց ըմբոստութիւնը: Բաբակ թէեւ Ամարաս (Մուղան) կու գայ ձմեռելու, սակայն կ'երեւի թէ արաբական յաջորդական բանակներուն դէմ իր մարտնչման համար խոհեմութիւն չի սեպեր Սիւնեցիք ա՛լ աւելի գըրգռել եւ կը ջանայ խաղաղութեամբ շահիլ ապստամբները: Եսայի–Աբու Մուսէ, որ յաջորդեց Աբլասադի եւ անոր քեռորդին